ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԱԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ (այսուհետ ՔՏՀԱՏՄ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան երեսունմեկ մայիսի երկու հազար տասնինը թվական

Կառավարման խորհրդի նիստին (այսուհետ՝ Խորհրդի նիստ) մասնակցեցին՝

Նախագահող՝ Ֆ.Ցոլակյան – ՀՀ ԱԻՆ Նախարար
Խորհրդի անդամներ՝
Կ.Բրուտյան - ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ,
Տ.Խաչիկյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,
Ս.Պետրոսյան - ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավար,
Ա.Ասոյան- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար,
Է.Կիրակոսյան- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության տնօրեն,
Հ.Ավագյան - <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> ՀԿ-ի տնօրեն,

Խորհրդի նիստին չեն մասնակցել խորհրդի անդամներ՝

Ա. Բաբայան- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ,
Վ. Վերմիշյան - Քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Ա.Կարապետյան– Զարգացման լուծումների ինստիտուտ հիմնադրամի գործադիր տնօրեն
Ս. Թովմասյան –Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամի ճարտարապետության ֆակուլտետի դեկան:
Քվորումն ապահովված էր:
Նիստի քարտուղար՝ Ն. Մկրտչյան:
Նիստին մասնակցելու համար հրավիրված էր Ա.Արզումանյանը:

Նիստին ներկա էին՝ ՀՀ ՔՏՀԱՏՄ ղեկավար՝ Գ.Շախբազյանը, Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի աշխատակիցներ՝ Տ.Հակոբյանը, Ա.Ավետիսյանը, ՀՀ ՔՏՀԱՏՄ Որակի ապահովման վարչության պետ՝ Գ. Գիլոյանը, ՔՏՀԱՏՄ իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատակիցներ Ե .Զոհրաբյանը, Ի.Սնգրյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Օրակարգը հաստատվեց միաձայն:

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու հարցի քննարկում.
(զեկուցող ՀՀ ՔՏՀԱՏՄ ղեկավար՝Գ. Շախբազյան)

2. Ստուգումների վերաբերյալ ուղեցույցի հաստատում.
(զեկուցող ՀՀ ՔՏՀԱՏՄ ղեկավար՝ Գ. Շախբազյան)

3. ՀՀ ՔՏՀԱՏՄ հաստիքացուցակում և բյուջեում կատարվելիք փոփոխություններին հավանություն տալու հարցի քննարկում.
(զեկուցող՝ ՀՀ ՔՏՀԱՏՄ ղեկավար՝ Գ.Շախբազյան)

4. ՀՀ ՔՏՀԱՏՄ Որակի ապահովման վարչության կողմից 2019 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքում բացահայտված ռիսկերի և խնդիրների վերաբերյալ հաշվետվության հավանություն տալու հարց
(զեկուցող ՀՀ ՔՏՀԱՏՄ Որակի ապահովման վարչության պետ՝ Գ. Գիլոյան)

5. ՀՀ ՔՏՀԱՏՄ կատարողականի գնահատման մեթոդաբանության հաստատում.
(զեկուցող ՀՀ ՔՏՀԱՏՄ Որակի ապահովման վարչության պետ՝ Գ.Գիլոյան)

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կառավարման Խորհրդի նիստի նախագահողը ողջունեց ներկաներին և առաջարկեց անցնել օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը:

ՀԱՐՑ ԱՌԱՋԻՆ ՀՀ ՔՏՀԱՏՄ ղեկավար Գ. Շախբազյանը ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը : Զեկուցողը հայտնեց , որ սույն որոշմամբ ներկայացվել է 30 ստուգաթերթեր՝ ըստ ոլորտների, որոնց վերաբերյալ ՀՀ կառավարության որշման ընդունման անհրաժեշտության վերաբյալ ներկայացված ամփոփագրով ներկայացվել են առաջարկություններ, որոնք ընդունվել են և ներառվել

ստուգաթերթերում: Ստուգաթերթերի վերաբերյալ առանձին դիտարկում էր ներկայացրել նաև Տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ՝ Ս.Թովմասյանը: Դիտարկումն ընդունելի է և լրացուցիչ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացրել: Խորհրդի անդամ Հ. Ավագյանը առաջարկեց , որ ստուգաթերթերի հետ կապված անհրաժեշտ է նախապես կազմակերպել ֆոկուս խմբեր, քննարկումներ գործարար համայնքի հետ և ներառել նաև գործարար համայնքի դիտարկումները: Նիստը նախագահողը ողջունեց առաջարկը և այն համարեց ընդունելի հետագա հնարավոր փոփոխությունների կատարման ժամանակ կիրառելու համար: Խորհրդի անդամ Ա. Ասոյանը տեղեկացրեց, որ ստուգաթերթերն անցել են փորձարկում երկու տնտեսվարողի մոտ և որ կատարված փոփոխությունները հիմնականում տեխնիկական բնույթի են՝ այն է << տեսչություն>> բառը փոխարինվել է <<տեսչական մարմին>>բառով և նմանատիպ այլ փոփոխություններ:
Նախագահողը ամփոփելով քննարկումները հարցը դրեց քվերակության: .
Խորհուրդը միաձայն կողմ քվեարկությամբ հավանություն տվեց <<Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:
Կողմ՝ 6 ձայն, դեմ՝ 1 ձայն /Հ. Ավագյան - ՓՄՁ համագործակցության ասոցիացիա ՀԿ տնօրեն/:

ՀԱՐՑ ԵՐԿՐՈՐԴ.
Զեկուցող Գ. Շախբազյանը ներկայացրեց ՀՀ ՔՏՀԱՏՄ ծառայողների համար նախատեսված ստուգումների ուղեցույցը: Ուղեցույցի վերաբերյալ արտահայտվեցին խորհրդի անդամներ Ս. Պետրոսյանը, Հ. Ավագյանը, Տ. Խաչիկյանը, Կ. Բրուտյանը: Վերը թվարկված Խորհրդի անդամների դիտարկումները վերաբերվում էին ուղեցույցի բովանդակային մասին, մասնավորապես, որ այն կրկնօրինակ է << ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի և ցանկալի է, որ այն պարունակի գործառույթների իրականացման գործիքակազմի նկարագիր: Հարցի վերաբերյալ արտահայտվեցին Ա. Ասոյանը և Ս. Պետրոսյանը, առաջարկելով, բացի ուղղակի օրենսդրական հղումներով նախատեսել նաև ստուգումների ընթացակարգերի մանրամասն նկարագրություն:
Նախագահողի թույլտվությամբ նիստերի քարտուղար՝ Ն. Մկրտչյանը խնդրեց արտահայտվելու իրավունք և հայտնեց, որ Կառավարման խորհրդին ներկայացված ուղեցույցի նախագիծը, տեսչական մարմինների աշխատանքների համակարգման

գրասենյակի աշխատակցի ուղղորդմամբ պատրաստվել է արդեն իսկ գործող ՝ ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից 2018 թվականից գործողության մեջ դրված և կիրառվող ուղեցույցի հիման վրա: Արդեն իսկ կիրառվող ուղեցույցում փոփոխությունները մասնավորապես կատարված են 41 կետում՝ ՔՏՀԱՏՄ ոլորտային առանձնահատկություններից ելնելով: Խորհրդի անդամ Ա. Ասոյանը հայտնեց, որ դա ընդունելի հիմնավորում չէ և պետք էր դիմել այլ տեսչական մարմինների և օգտվել այլ ուղեցույցներից:
Նիստի նախագահողը ամփոփելով հարցի քննարկումը, առաջարկեց Ստուգումների ուղեցույցի նախագիծը վերադարձնել վերախմբագրման՝ խորհրդի նիստին հնչեցրած դիտարկումների և առարկությունների ներառմամբ, ինչին կողմ արտահայտվեցին խորհրդի բոլոր անդամները:
Հարցը դրվեց քվերակության: Կառավարման խորհրդի անդամները միաձայն դեմ քվերակեցին ստուգումների ուղեցույցի հաստատմանը:

Կողմ՝ 0 ձայն, դեմ՝ 7 ձայն:

ՀԱՐՑ ԵՐՐՈՐԴ.

Տեսչական մարմնի հաստիքացուցակում և 2019թ-ի բյուջեում կատարվելիք փոփոխությունների քննարկում.

Զեկուցող Գ. Շախբազյանը ներկայացրեց ՀՀ ՔՏՀԱՏՄ հաստիքացուցակում հաստիքների փոփոխության և բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը՝ (փոփոխվող պաշտոնների անձնագրերը ներկայացված են):

Տեսչական մարմնի հաստիքացուցակում կատարել հաստիքների փոփոխում: Հաստիքացուցակում նախատեսել ՔՏՀԱՏՄ-ի պետական գնումների, ֆինանսական հարցերով զբաղվող աշխատակցի/աշխատակիցների հաստիքներ:

Զեկուցողը իր խոսքում նշեց, որ պետական գնումների ոլորտում անհրաժեշտ գործառույթների իրականացման համար Տեսչական մարմինը համապատասխան գիտելիքներ ունեցող մասնագետ չունի: Տեսչական մարմնի ղեկավարը ներկայացրեց նաև ՔՏՀԱՏՄ քաղաքացիական ծառայողների հաստիքացուցակում հաստիքների քանակական պահանջների նախատեսվող փոփոխությունները, որոնք պայմանավորված են Լոռու և Շիրակի մարզերում ոլորտային մասնագետների ընդգրկման խնդիրներով: Գ.Շախբազյանը հիմնավորեց մարզերում ըստ ոլորտների փորձագետների թվերի վերաբաշխման անհրաժեշտությունը:
Հաջորդաբար՝ զեկուցող Գ. Շախբազյանը ներկայացրեց Տեսչական մարմնի տարեկան

բյուջեում ներտողային փոփոխություն կատարելու անհրաժեշտության հարցը՝ այն է Տեսչական մարմնի 2019 թ-ի բյուջեում կատարել գնային և քանակային փոփոխություն:

Խորհրդի անդամ Կ. Բրուտյանը հայտնեց, որ Տեսչական մարմնի պետական գնումների գործառույթների իրականացումը, ոլորտը կարգավորող օրենսդրությամբ վերապահված է ՀՀ Վարչապետի աշխատակազմին և որ նման փոփոխությունը իրավաչափությունը վիճելի է: Առավել նպատակահարմար է նշված գործառույթի իրականացման համար Վարչապետի աշխատակազմում ավելացնել հաստիք և տեսչական մարմինների գնումների գործառույթների իրականացումը վերապահել տվյալ անձին: Խորհրդի անդամ Ա. Ասոյանը հայտնեց, որ տեսչական մարմինների կողմից ՄԺԾԾ կազմելու և գնումների հայտերի ներկայացման, այդ աշխատանքների կազմակերպման բնագավառներում առկա են խնդիրներ, որոնք համակարգային լուծման անհրաժեշտություն ունեն: Նախագահողը լսեց խորհրդի անդամների կարծիքները և առաջարկեց հարցն ընդունել՝ հաշվի առնելով 1-ին կետի վերաբերյալ Կ. Բրուտյանի ներկայացրած առաջարկությունը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց խնդրո առարկա կետը ևս մեկ անգամ աշխատանքային կարգով քննարկել Կ. Բրուտյանի հետ: Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ՝ 6 ձայն, դեմ՝ 1 ձայն /Հ. Ավագյան - ՓՄՁ համագործակցության ասոցիացիա ՀԿ տնօրեն/:

ՀԱՐՑ ՉՈՐՐՈՐԴ ԵՎ ՀԻՆԳԵՐԵՐՈԴ.

ՔՏՀԱՏՄ Որակի ապահովման վարչության կողմից 2019 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքում բացահայտված ռիսկերի և խնդիրների վերաբերյալ հաշվետվություն:

Մինչ զեկուցողի կողմից հարցը ներկայացնելը, խորհրդի անդամ Տ. Խաչիկյանը ներկայացրեց իր դիտարկումները օրակարգի չորրորդ և հինգերորդ կետերի վերաբերյալ, նշելով, որ այս կետերի և ընդհանրապես օրակարգում ներկայացված հարցերի հետ կապված առաջարկում է ուշադրություն դարձնել օգտագործվող եզրույթներին, մասնավորապես՝ <<մեթոդոլոգիա>>,<<մեթոդաբանություն>> տերմինների օգտագործմանը, ինչպես նաև <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքով սահմանված պահանջի կատարմանը՝ այն է եռամսյակային հաշվետվություններ ներկայացնելու որակի ապահովման վարչության գործառույթին: Խորհրդի անդամ Տ. Խաչիկյանը իր խոսքում անդրադարձավ նաև Որակի ապահովման վարչության կողմից ներակայցվող հաշվետվության ձևաչափի իրավական կարգավորման հարցին: Առաջարկեց հստակեցնել Որակի ապահովման վարչության կողմից ներկայացվող հաշվետվության ձևի վերաբերյալ ՀՀ

կառավարության որոշում առկա է թե ոչ, և եթե առկա է ապա պահապանել սահմանված ձևաչափը: Խորհրդի անդամ Ս.Պետրոսյանը անդրադառնալով հաշվետվության ձևաչափին, նշեց որ ծանոթ է հաշվետվությանը: Արտահայտվող խորհրդի անդամներին լսելուց հետո նախագահողը ձայնը տվեց զեկուցողին:
Զեկուցող ՀՀ ՔՏՀԱՏՄ Որակի ապահովման վարչության պետ Գ. Գիլոյանը ներկայացրեց 2019 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքում բացահայտված ռիսկերի և խնդիրների վերաբերյալ հաշվետվությունը: Զեկուցող Գ. Գիլոյանը հայտնեց, որ հաշվետվությունն իր մեջ ներառում է ոչ միայն կատարված աշխատանքի ամփոփ, այլ նաև Տեսչական մարմնի բնականոն գործունեության համար արձանգրված ռիսկեր և դրանց լուծման հրատապության վերաբերյալ հիմնավորումներ: Նիստը նախագահողը լսելով խորհրդի անդամների կարծիքները, առաջարկեց օրակարգի վերջին երկու կետերն ընդունել ի գիտություն:
Դրանք են՝

4. ՔՏՀԱՏՄ Որակի ապահովման վարչության կողմից 2019 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքում բացահայտված ռիսկերի և խնդիրների՝ վերաբերյալ հաշվետվություն.

5. ՔՏՀԱՏՄ կատարողականի գնահատման մեթոդաբանության հաստատում.

Խորհրդի անդամները միաձայն կողմ քվերակեցին օրակարգի վերջին երկու կետերն ի գիտություն ընդունելու վերաբերյալ՝ հանձնարարելով 5-րդ կետում հաշվի առնել Տ. Խաչիկյանի դիտողությունները և խմբագրված նախագիծը ներկայացնել առաջիկա նիստին:

Կողմ՝ 6 ձայն, դեմ 1 ձայն /Հ. Ավագյան - ՓՄՁ համագործակցության ասոցիացիա ՀԿ տնօրեն/:

Քննարկման ավարտին Տեսչական մարմնի ղեկավար՝ Գ. Շախբազյանը հայտնեց , որ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումներն ունեն մարզային գրասենյակների տարածքների խնդիր, ինչը լրջագույնս խոչընդոտում և դժվարեցնում է Տեսչական մարմնի բնականոն գործունեության իրականացումը տարածքներում: Տեսչական մարմնի ղեկավարը դիմեց խորհրդի անդամներին հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումներն արտահայտելու համար: Խորհրդի անդամ Ս. Պետրոսյանը առաջարկեց օժանդակել մարզերում գտնվող կադաստրի տարածքային գրասենյակներով, իսկ նախագահող՝ Ֆ.Ցոլակյանը պատրաստակամություն հայտնեց, Կառավարման խորհրդի անունից Տեսչական մարմինների տարածքային

ստորաբաժանումների տարածքի խնդիրը լուծելու համար դիմել Վարչապետի աշխատակազմին: Հնչեցին կարծքներ նաև դիմել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ խնդրին օժանդակելու համար:

Արձանագրությունը կազմեց՝ ՀՀ ՔՏՀԱՏՄ կառավարման Խորհրդի քարտուղար Ն. Մկրտչյանը: Արձանագրությունը բաղկացած է 7 (յոթ) էջից:

Կառավարման Խորհրդի նախագահ,
ՀՀ ԱԻՆ Նախարար՝ Ֆ.Ցոլակյան

ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ՝ Կ. Բրուտյան

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ՝ Տ.Խաչիկյան

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավար՝ Ս.Պետրոսյան

ՀՀ վարչապետի աշխատակազմի ՏՄ աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար՝ Ա.Ասոյան

ՀՀ արդյունաբերողների և գործարարների միություն
ՀԿ տնօրեն՝ Է.Կիրակոսյան

<<ՓՄՁ համագործակցությանասոցիացիա>>
ՀԿ-ի տնօրեն Հ.Ավագյան

Կառավարման խորհրդի նիստի քարտուղար՝ Ն. Մկրտչյան